

## Բ Ա. Ռ Ա. Զ Ն Ն Ո Ւ Թ Ի Կ Ի Ն

ԱՇԽԱՐՀԱՔՍԹ ԼԵԶՈՒԻՆ ՔԱՆԻ ՄԻ ԲԱՌԵՐԸ

Խնալ . — Գրոց խնդալ բառն է , որ սաստիկ ուրախանակ կնշանակէ . եւ թէպէտ խնալը աշխարհաբառ՝ ծիծաղիլ բառին նշանակութեամբը կբանի , բայց կարելի է ուլու է ու տառով գրել՝ քան թէ տիւնով . խրնդալ , խնդում , խնդմնալ . մանաւանդ որ և տառէն վերջը գրուող ու գիրը արդէն շատրառի մէջ տիւնի պէս կհնչուի :

Խնդրուիլ . — Խրիմու եւ լեշաստանի աշխարհաբառներուն մէջ կգործածուի այս բայը՝ իբրեւ աղաջանի ընել , աղաջել , խնդրել . կազմութենէն կերեւի որ տաճկերենի հետեւութեամբ ձեւացած բայ է (եալվար օլմազ) , ուստի եւ գովելի չէ :

Խոյ . — Ամանք կարծիք կընեն թէ ուամկօրէն ինչպէս որ կհնչուի յոմանց այս բառը , այսինքն խօյ , այն է շիտակը . բայց մեր լեզուին մէջ ուրիշ ամենեւին այսպիսի բառ մը չգտնուելով՝ որոյ ոյ վանկը ճյ հրնչուի , հարկ է ըսել թէ խոյ բառն ալ այնպէս պիտի հնչուի՝ ինչպէս նոյ , զոյ , հանյ , տափոյ , մարախոյ եւ այլն :

Խոշոր . — Այս բառը գրոց լեզուին մէջ կնշանակէ կոշտ , թանձր , անհարժ . ուստի հակառակն է կակուղին , բարակին , փափուկին եւ ողորկին (տճ . գապա) . իսկ աշխարհաբառին մէջ կգործածուի իբրեւ մեծ , անհեթեթ (տճ . խրի , պաղապան) : Այսպիսի բաներուն բնիկ նշանակութիւնները իրենց գարձրնելը մեծ օգուտ է գրոց լեզուին անկո-

րուստ պահպանութեան ու աշխարհաբառին յատակութեանը :

Խորդ . — Խրիմու եւ լեշաստանի աշխարհաբառներուն մէջ կգործածուի այս բառը՝ փոխանակ ըսելու ուղղորդ , կամ գէթ լղորդ , այսինքն ուղիղ , շիտակ , ստոյգ , ճշմարիտ . ինչպէս որ Փոքր Ասիոյ Հայերէն ոմանք կըբանեցընեն ասոր տեղը դորդ : Խրիմեցիք բայն ալ կգործածեն՝ խորդել , իբրեւ շինել : Եթէ այս տգեղ ձայները հարկ չհամարուի մէկգի ձգել , եւ սոցա տեղը բանեցընել՝ ուղիղ եւ շինել բառերը , գոնէ արժան էր ուղղագրութիւնը կանոնաւորել , եւ ըսել դորդ , դորդել , ինչպէս որ խրկել գրելու եւ հնչելու տեղ՝ այժմ կգրեմք ու կհնչեմք դրկել , որ է գրաբառին յուղարկելը :

Խրիմ . — Այս յատուկ անունը մեր մէջ այլ եւ այլ կերպով գրողներ շատ կան : Հին գրուածոց մէջ կտեսնեմք Դոխմ գրուած , իսկ այժմու գրութիւններն են Խըրլմ , Խըրլմ , Գըրլմ , Գրիմ եւ այլն : Խրիմ ըսելը եւ գրելը՝ թերակղղւոյս հայ բնակչաց հընչմանը աւելի համեմատ լինելով՝ ընտրելին այս կերեւի . Դոխմ կամ Դրիմ ըսելը թանձր կուգայ , Գրիմ կամ Գըրլմ ըսելն աւ օտար եւ խորթ :

Խրկել . — Գրաբառին յուղարկել բայէն եղած է դրկել , եւ անկից՝ խրկել . լսւ կերեւի դրկելը , թէպէտ եւ փոքր ինչ թանձր համարուի :